Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 344 - Ա
որոշման

ԾՐԱԳԻՐ

«ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՎԵՐԱԶԻՆՈՒՄ ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԴԻՍՓԼԵՅՆԵՐՈՎ»

1.	Ծրագրի նպատակը	Հայաստանի Հանրապետության 100 հանրակրթական դպրոցների վերազինում նորագույն ինտերակտիվ դիսփլեյներով՝ որպես կրթության հիմնարար իրավունքի իրացման արդյունավետության բարձրացման միջոց: Տեխնիկան հնարավորություն կտա ժամանակակից դասավանդման մեթոդաբանության և վիզուալիզացիայի միջոցով, այդ թվում՝ Աշխարհացույց կրթական հարթակի օգտագործմամբ, բարձրացնել դասապրոցեսի արդյունավետությունը, հետևաբար՝ աշակերտների կրթության որակը:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	«Վիզուալ Հայաստան» զարգացման հիմնադրամ (հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, 0056, Գայի պողոտա 4, ՀՎՀՀ՝ 01021075)
4.	Ծրագիրը կատարողը	«Վիզուալ Հայաստան» զարգացման հիմնադրամ (հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, 0056, Գայի պողոտա 4, ՀՎՀՀ՝ 01021075)
5.	Ծրագրի իրականացման վայրը և ընագավառը	Երևան քաղաքի և Հայաստանի Հանրապետության մարզերի հանրակրթական դպրոցներ, կրթության ընագավառ
6.	Ծրագրի բյուջեն	97,000,000 դրամ

7.	Բարեգործություն ստացողը	Երևան քաղաքի և Հայաստանի Հանրապետության մարզերի 100 հանրակրթական դպրոցներ, որոնք կընտրվեն ըստ հետևյալ չափանիշների՝ 1) Աշխարհացույց ծրագրի վերապատրաստումների մասնակցություն, 2) Աշխարհացույց կրթական հարթակով դասերի կազմակերպում, 3) «ԻՄ ԱՇԽԱՐՀԱՑՈՒՅՑԸ. քարտեզագրելով ...» խորագրի ներքո նախագծային աշխատանքի իրականացում, 4) մոտիվացիոն նամակ, 5) դպրոցում ծրագրին ներգրավված ուսուցիչների քանակ, 6) դպրոցում ծրագրի շահառու աշակերտների քանակ, 7) դպրոցում տեխնիկական հագեցվածության մակարդակ, 8) դպրոցի՝ համայնքում մենթոր դպրոց լինելու կամ դառնալու հանգամանք, 9) ծրագրի մեջ ներգրավվածության այլ հանգամանքներ:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2024 թվականի մայիսի 15-ից մինչև 2025 թվականի փետրվարի 28-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի շրջանակներում նախատեսվում է մասնակցության դիմում-հայտերի ընդունում և մշակում, դիմումատու դպրոցների հետ վերապատրաստումներ, Աշխարհացույց հարթակի ներկայացում, հարթակից օգտվելու հմտությունների ուսուցանում, նախագծային ուսուցման ձևաչափով դպրոցների կողմից Աշխարհացույց հարթակով «ԻՄ ԱՇԽԱՐՀԱՑՈՒՅՑԸ. քարտեզագրելով ...» խորագրի ներքո նախագծային աշխատանքի իրականացում, ներկայացում, շահառուների ընտրություն, տեխնիկայի նվիրաբերում դպրոցներին և այցելություն շահառու դպրոցներ, որի համար անհրաժեշտ է ձեռք բերել 100 հատ ինտերակտիվ հեղուկ-բյուրեղային դիսպլեյ՝ 97,000,000 դրամ արժողությամբ: Նախատեսվում է իրականացնել 2024 թվականի մայիսի 15-ից մինչև 2025 թվականի փետրվարի 28-ը:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	100 հատ ինտերակտիվ հեղուկ-բյուրեղային դիսպլեյի ձեռքբերման և տեղադրման աշխատանքների իրականացում՝ 97,000,000 դրամ արժողությամբ:

11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր նախատեսված չեն:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ծրագրի շրջանակներում «Վիզուալ Հայաստան» զարգացման հիմնադրամը համագործակցում է Կրթության, գիտության, սպորտի և մշակույթի նախարարության և Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն հիմնադրամի հետ: Աշխարհացույց կրթական հարթակը Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից երաշխավորված է՝ որպես ուսումնամեթոդական նյութ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով բարեգործության ոլորտը համակարգող լիազորված մարմնին կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

17.05.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ